

D e t o u r

Արտասուեմք բաժնուեցայ ես կեանքիս
 Մայր նամբայէն, միշտ ծաղկաւէտ, արեգդէմ.
 Ու շեղ նամբու մէջ նետեցի իմ հոգիս
 Բոյսի մը պէս, դուրս քաշուած իր արմատէն:

Ինչ որ ընտրեմք՝ երագեր եմ ակամայ,
 Փողոցն է, ձոր, քաղաքի մը՝ գործատուն.
 Կ'ապրիմ արագ, որպէս վագոդ մեքենայ,
 Եւ վարձակալ՝ իրաւունքի մը տրտում:



Կար ժամանակ տուն ունէինք, կաւէ գուշ՝
 Ըստինքի պէս կաթով, սերով միշտ լեցուն.
 Արեւահամ հաց կար ձեռքիս մէջ, քնքուշ,
 Որովհետեւ մերն էր քրտինքն ու ածուն:

Կար ժամանակ արտը սեղան էր ինծի,
 Այգին կարաս: Արիւնի օր մը, սակայն,
 Անոնք գիւղիս դիակին քով քողուցի՝
 Դարձայ փայլուն պընակի մը մուրացկան:

ԼՈՒԹՖԻ ՄԻՆԱՍ

Պոստըն